

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (72)
2016 թ.

Գլխավոր խմբագիր՝
Ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո թ ի ու ը ղ

Սամվել Դիլբանդյան -

Ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան -

Ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - Ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - Ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - Ի.գ.դ.

Դավիթ Ավետիսյան - Ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - Ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - Ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - Ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

4.05.2016

Հանձնված է տպագրության

20.06.2016

СОЮЗ ЮРИСТОВ РА
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (72)

2016 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.

Тираж: 500

Сдано в набор 04.05.2016

Подписано к печати 20.06.2016

«Պետություն և իրավունք» գիտական հանդեսի սույն համարը նվիրված է վաստակաշատ դատավարագետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ վաստակավար իրավաբան
Ալեքսանդր Բորիսի Սոլովյովի
ծննդյան 80-ամյակին

Данный номер научного журнала “Государство и право” посвящен 80-летию юбилею известного процессуалиста, доктора юридических наук, профессора, Заслуженного юриста РФ
Александра Борисовича Соловьева

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲՈՐԻՍԻ ՍՈՒՈՎՅՈՎԻՆ ԵՊՀ ՈՍԿԵ ՄԵՂԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆ 8

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՆԸ 9

ԽՈՍՔ ՈՒՍՈՒՑՉԻՆ 10

Ալեքսանդր Վոլկոդ

«ՄԵՎ, ԲԱՅՑ ԱՆՄԱՐ ԿԻՐՔ» (ՊՐՈՖԵՍՈՐ Ա.Բ. ՍՈՒՈՎՅՈՎԻ ԾՆՆԴՅԱՆ
80-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ) 25

Ալեքսանդր Սոլովյով

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՈՂ ԵՎ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԵՐՈՒՄ
ԱՊԱՀՈՎԵԼ ՏՈՒԺՈՂԻ ԵՎ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ 38

Գագիկ Ղազինյան, Անի Դանիելյան

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԴԱՏԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍՎՈՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 53

Լեոնիդ Գոլովկո

ՈՒՒՍԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՐՈՇ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 63

Սամվել Դիլբանյան, Նարեկ Մինասյան

ՈՐՊԵՍ ՄԵՂԱԴՐՅԱԼ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 65

Արման Թաթոյան

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ 101

Անատոլի Վլասով

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ
ՈՐՈՇ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 109

Գագիկ Ղազինյան, Տաթևիկ Սուջյան

ՕՐԵՆՔԻ ՄԻԱՏԵՍԱԿ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ
ՎՃՈՒԲԵԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ) 120

Մարիա Զյաբլինա

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԵՎ ԿԱՍՎԱԾՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ
ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՈՂ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՎ 127

Հրայր Դուկասյան, Անահիտ Հարությունյան

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 128

Դավիթ Ավետիսյան

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐՈՎ՝ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍՊՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 141

Տատյանա Ռյաբինինա, Դմիտրի Ալիմով

ԱՌԵՐԵՍՄԱՆ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ-ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԻՃԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՐՑԵՐԸ 159

Սերգեյ Մարաբյան

ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 160

Վահե Ենգիբարյան, Արթուր Զախոյան

ՔՆՆԻՉԻ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 174

Դավիթ Խաչատուրյան

ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՃՈՒ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԹՈՂ..... 203

Արմեն Հովհաննիսյան

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ..... 204

СОДЕРЖАНИЕ

ПРИКАЗ О НАГРАЖДЕНИИ АЛЕКСАНДРА БОРИСОВИЧА СОЛОВЬЕВА ЗОЛОТОЙ МЕДАЛЬЮ ЕГУ	8
НАШ ЮБИЛЯР	9
СЛОВО УЧИТЕЛЮ.....	10
Александр Волеводз	
«ОДНА, НО ПЛАМЕННАЯ СТРАСТЬ» (К 80-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ ПРОФЕССОРА АЛЕКСАНДРА БОРИСОВИЧА СОЛОВЬЕВА).....	11
Александр Соловьев	
НЕОБХОДИМО ОБЕСПЕЧИТЬ ПАРИТЕТНОСТЬ ПРАВ ПОТЕРПЕВШЕГО И ОБВИНЯЕМОГО В УПК РФ И РА	26
Гагик Казинян, Ани Даниелян	
О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ СУДЕБНОГО КОНТРОЛЯ В ОТНОШЕНИИ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ.....	39
Леонид Головкин	
ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ РОССИЙСКОГО ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ В КОНТЕКСТЕ НЕКОТОРЫХ НОВЕЙШИХ ИНИЦИАТИВ НА ПОСТСОВЕТСКОМ ПРОСТРАНСТВЕ	55
Самвел Дилбандян, Нарек Минасян	
НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ИНСТИТУТА ПРИВЛЕЧЕНИЯ В КАЧЕСТВЕ ОБВИНЯЕМОГО	74
Арман Татоян	
ПРОЦЕССУАЛЬНАЯ ФУНКЦИЯ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ И ЕЕ СООТНОШЕНИЕ С РАССЛЕДОВАНИЕМ ДЕЛА	76
Анатолий Власов	
НЕКОТОРЫЕ ТЕОРЕТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ ЗАДАЧ СОВРЕМЕННОГО СУДОПРОИЗВОДСТВА	102
Гагик Казинян, Татевик Суджян	
ФУНКЦИЯ ОБЕСПЕЧЕНИЯ ЕДИНООБРАЗНОГО ПРИМЕНЕНИЯ ЗАКОНА В РАМКАХ КАССАЦИИ (ПРАВОВАЯ СУЩНОСТЬ И МЕХАНИЗМ ОСУЩЕСТВЛЕНИЯ)	110
Мария Зяблина	
ОБЕСПЕЧЕНИЕ ПРАВ И ЗАКОННЫХ ИНТЕРЕСОВ ОБВИНЯЕМОГО И ПОДОЗРЕВАЕМОГО ПО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОМУ КОДЕКСУ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ.....	121
Граир Гукасян, Анаит Арутюнян	
ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ ПРОЦЕССУАЛЬНЫХ САНКЦИЙ ПО ПРОЕКТУ УПК РА.....	139

Давид Аветисян

ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ МЕР ПРЕСЕЧЕНИЯ ПО ДЕЛАМ ЧАСТНОГО
ОБВИНЕНИЯ ПО ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА
РА..... 145

Татьяна Рябина, Дмитрий Алымов

ПРОБЛЕМНЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ
И ТАКТИКО-КРИМИНАЛИСТИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ ПРОИЗВОДСТВА
ОЧНОЙ СТАВКИ..... 147

Сергей Марабян

НЕКОТОРЫЕ СООБРАЖЕНИЯ ОТНОСИТЕЛЬНО ИЗМЕНЕНИЯ
ТЕРРИТОРИАЛЬНОЙ ПОДСУДНОСТИ УГОЛОВНЫХ ДЕЛ..... 171

Ваге Енгибарян , Артур Чахоян

УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЕ И ОРГАНИЗАЦИОННО-ТАКТИЧЕСКИЕ
ОСОБЕННОСТИ ФОРМ ВЗАИМОДЕЙСТВИЯ СЛЕДОВАТЕЛЯ С СОТРУДНИКОМ
ОРГАНА ДОЗНАНИЯ..... 185

Давид Хачатурян

ГНОСЕОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ОПРАВДАТЕЛЬНОГО ПРИГОВОРА КАК МЕТОД
ОПРЕДЕЛЕНИЯ ПРЕДМЕТА СУДЕБНОГО ПОЗНАНИЯ..... 187

Армен Оганесян

ПРОБЛЕМЫ, ВОЗНИКАЮЩИЕ НА ЭТАПЕ ПРЕДВАРИТЕЛЬНОГО
ПРОИЗВОДСТВА ПО ПЕРЕСМОТРУ ОКОНЧАТЕЛЬНОГО СУДЕБНОГО АКТА ПО
ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ ОБСТОЯТЕЛЬСТВАМ 213

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Հրայր Ղուկասյան

*ՀՀ Նախագահի իրավական հարցերով օգնական,
ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի
նախագիծը մշակող աշխատանքային խմբի ղեկավար,
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու (e-mail: hghukasyan@ysu.am)*

Անահիտ Հարությունյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ
(e-mail: anahitharutyunyan.arm@gmail.com)*

Քրեական արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումների առաջնային նպատակը մի կողմից ենթադրյալ հանցագործությունների արդյունավետ քննության ապահովումն է, իսկ մյուս կողմից՝ անձի իրավունքների և ազատությունների լիարժեք պաշտպանության երաշխավորումը: Վերոնշյալը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդվածի բովանդակությունից, ըստ որի՝ Նախագծի նպատակն է անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված՝ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանումը:

Վարույթի իրականացման արդյունավետության հիմնական երաշխիքը վարույթի բնականոն ընթացքի ապահովումն է, որի լիարժեք իրացման տեսանկյունից խիստ կարևորվում է վարույթի թե՛ հանրային, թե՛ մասնավոր մասնակիցների և թե՛ վարույթին օժանդակող անձանց կողմից պատշաճ վարքագծի դրսևորումը:

Գործնականում լայն տարածում ստացած այն դեպքերը, երբ վարույթի մասնակիցները չարաշահում են իրենց իրավունքները կամ ոչ պատշաճ են կատարում իրենց պարտականությունները կամ վարույթի այս կամ այն մասնակցի նկատմամբ դրսևորում են անհարգալից վերաբերմունք, վերջին հաշվով արդարադատության արդյունավետ իրականացման վտանգ են ներկայացնում: Հետևաբար վարույթի բնականոն ընթացքը, ինչպես նաև քրեական դատավարության մյուս սկզբունքների լիարժեք իրացումն ապահովելու նպատակով պետք է առկա լինեն օրենսդրական որոշակի կառուցակարգեր՝ նմանատիպ դեպքերին համաչափորեն արձագանքելու համար:

Քրեական դատավարության գործող օրենսգրքում այս կապակցությամբ առկա լուծումները, մասնավորապես դատական քննության ընդհանուր պայմանների տեսքով դատարանի կողմից կիրառվող դատական սանկցիաները, հատվածական են, ոչ ամբողջական, չեն ներառում քրեական վարույթի բոլոր փուլերը (վերաբերում են միայն դատական քննության փուլին, կարող են կիրառվել միայն դատարանի կողմից), ուստի և չեն հավակնում լուծելու քրեական դատավարության առջև ծառայած համակարգային խնդիրները: Ընդ որում, այս ինստիտուտը ներդրվել է միայն 2007

թվականին, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ¹:

Մինչդեռ, ի տարբերություն գործող օրենսդրության, Նախագծում այս իրավահարաբերությունները ստացել են հիմնարար և համապարփակ կարգավորում: Նախ և առաջ Նախագծով սահմանված ոչ իրավաչափ վարքագծի արգելքի սկզբունքը թույլ չի տալիս վարույթի մասնակիցների կողմից իրենց իրավունքների այնպիսի չարաշահում, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին (Նախագծի 29 հոդվածի 2-րդ մաս): Ավելին, նույն սկզբունքը վարույթի մասնավոր մասնակիցների և օժանդակող անձանց համար նախատեսում է հիմնարար պարտականություն, ըստ որի՝ նրանք պետք է իրենց իրավունքներից օգտվեն և իրենց պարտականությունները կատարեն բարեխղճորեն (Նախագծի 29 հոդվածի 1-ին մաս):

Պետք է նկատել, որ հոդվածում տեղ գտած «այլ անձանց կամ արդարադատության շահերին վնաս հասցնել» արտահայտությունը ոչ թե նեղացնում է սկզբունքի կիրառման ոլորտը, այլ օգտագործվում է որպես ընդհանուր պայման, օրինաչափություն: Չենք կարծում, որ կարող են լինել այնպիսի իրավիճակներ, երբ վարույթի մասնավոր մասնակցի կողմից իր իրավունքների կամ վարության հնարավորությունների չարաշահումը չհանգեցնի արդարադատության շահի հետ որևէ հակասության, անգամ եթե գործի ելքը դրանից չփոխվի: Այսպես, օրինակ՝ տուժողի փաստաբանն իր միտումնավոր գործողություններով ձգձգում է դատական նիստը, որպեսզի ազատության մեջ գտնվող մեղադրյալի բանկային հաշիվները կամ գույքն ավելի երկար ժամանակ լինեն արգելանքի տակ: Թերևս այս իրավիճակում փաստաբանի գործողությունները գուցե և գործի ելքի վրա որևէ ազդեցություն չունենան, սակայն արդարադատության շահի հետ հակասությունն անխուսափելի է, քանի որ գոյություն ունի դատաքննությունը ողջամիտ ժամկետում ավարտելու պահանջ (Նախագծի 24 հոդվածի 1-ին մաս), որը պետք է պահպանվի անկախ վարույթի առանձին մասնակիցների սուբյեկտիվ ձգտումներից:

Միանշանակ է, որ իրավունքների չարաշահման արգելքի առկայությունն ինքնին հստակ արտահայտում է հանրային և մասնավոր շահերի հարաբերակցության խնդիրը՝ հավաստելով, որ թեև քրեական վարույթի համար մասնավոր շահերը կարևոր արժեք են, սակայն բացարձակ չեն:

Միջազգային մակարդակում իրավունքների չարաշահման արգելքն ամրագրված է մի շարք հիմնարար փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (այսուհետ՝ Կոնվենցիա): Կոնվենցիայի 17-րդ հոդվածի համաձայն՝ Կոնվենցիայով նախատեսված ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունի զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) ձևավորած դիրքորոշման՝ նշված հոդվածի նպատակն է կանխարգելել տոտալի-

¹ Տե՛ս 21.02.2007թ. ՀՕ-93-Ն օրենքը:

տար նպատակներ հետապնդող անձի կամ խմբի կողմից Կոնվենցիայում ամրագրված սկզբունքների օգտագործումն ի շահ իրենց: Ընդ որում՝ Ղատարանն ամրագրում է, որ իրավունքների չարաշահումը կանխելն ամենևին չի նշանակում անձանց զրկել այն իրավունքներից և ազատություններից, որոնք նրանք իրենց գործունեության ընթացքում կարող են չարաշահել¹:

Նախագծում ոչ միայն ամրագրված է իրավունքների չարաշահումը՝ որպես հնարավոր վարքագծի արգելք, այլև դրան հակազդելու իրական կառուցակարգը, մասնավորապես՝ չարաշահման դեպքում համապատասխան սանկցիաների կիրառման հնարավորությունը:

Այսպես, «Ղատավարական հարկադրանքի միջոցներ» բաժնում նախատեսված է «Ղատավարական սանկցիաներ» վերտառությամբ առանձին գլուխ, որտեղ սպառիչ թվարկված են վարույթն իրականացնող մարմնի կողմից կիրառման ենթակա սանկցիաների տեսակները: Ընդ որում, Նախագծի կարգավորումների համաձայն՝ ղատավարական սանկցիաների կիրառությունը տարածվել է նաև մինչդատական վարույթի նկատմամբ, քանի որ նման լիազորությամբ օժտված են ինչպես դատարանը, այնպես էլ քննիչն ու դատախազը:

Իրավունքի չարաշահում երևույթի և դրա համար վրա հասնող սանկցիաների կիրառման հնարավորության հետ կապված ուշագրավ դիրքորոշում է արտահայտել ռուս գիտնական Վ.Ա. Բելովը, համաձայն որի՝ իրավունքի չարաշահում կատեգորիան անտրամաբանական է ու հակասական, քանի որ այս դեպքում խոսքը վերաբերում է պատասխանատվությանը, որը վրա է հասնում իրականացրած իրավունքի համար: Չէ՞ որ հակառակ դեպքում հարց է առաջանում՝ էլ ինչի համար է նախատեսված նման սուբյեկտիվ իրավունքը, և արդյոք դա առհասարակ սուբյեկտիվ իրավունք է²: Բարձրացված հարցի առնչությամբ բոլորովին այլ դիրքորոշում է արտահայտել ԱՄՆ Լուիզիանա նահանգի Գերագույն դատարանն իր գործերից մեկով, ըստ որի՝ իրավունքի չարաշահում են համարվում անգամ այն դեպքերը, երբ իրավունքն իրացվում է առանց որևէ լուրջ նպատակների հետևողական իրագործման, անգամ եթե այդ իրավունքի իրացման հետևանքով վնաս պատճառված չլինի³:

Վ.Ա. Բելովի արտահայտած դիրքորոշման հետ կարելի է համաձայնել միայն մասամբ: Մասնավորապես, բնական է, որ պետք է խուսափել այնպիսի իրավակարգավորում նախատեսելուց, որը մի կողմից վարույթի մասնակիցներին, հատկապես պրոֆեսիոնալ գործունեություն իրականացնող անձանց (պաշտպան, դատախազ) կվերապահի համապատասխան իրավունքներ, իսկ մյուս կողմից հենց այդ նույն օրենքը կպարունակի այդ իրավունքների իրացումը խոչընդոտող կառուցակարգեր:

Այս առումով կարծում ենք՝ Նախագծում առկա կարգավորումները բավական ամբողջական են և համակարգային, որոնք երաշխավորում են վարույթի ընթացքում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը: Այսպես, ըստ այդ կարգավորումների՝ ղատավարական սանկցիաները կիրառվում են այն

¹ W.P. and others v. Poland, Application no. 42264/98 [http://hudoc.echr.coe.int/eng?i=001-66711#{"itemid":\["001-66711"\]}](http://hudoc.echr.coe.int/eng?i=001-66711#{)

² Ст'у **Белов В.А.** Гражданское право: Общая и Особенная части: Учебник. М., 2003, էջ 363: Утеբերումն ըստ Параскевова С.А. К вопросу о квалификации злоупотребления правом // Российский судья. 2006. N 11, էջ 42: <http://justicemaker.ru/view-article.php?id=22&art=206>

³ Ст'у Morse v. J. Ray McDermott & Co., Inc. Annotate this Case, 344 So. 2d 1353 (1976) <http://law.justia.com/cases/louisiana/supreme-court/1977/344-so-2d-1353-1.html>

դեպքում, երբ վարույթի մասնակիցն իրավունքները չարաշահելու կամ պարտակա-
նությունների կատարումից շարամտորեն խուսափելու միջոցով խոչընդոտ է ստեղ-
ծում վարույթի բնականոն ընթացքի համար, ինչպես նաև անհարգալից վերաբեր-
մունք է դրսևորում դատարանի նկատմամբ (Նախագծի 141 հոդվածի 1-ին մաս)¹: Ա-
մեն դեպքում դատավարական սանկցիայի կիրառման նպատակը վարույթին ներգ-
րաված անձի պատշաճ գործելակերպն ապահովելն է, ուստի Նախագիծը երաշ-
խիքային մակարդակով հստակ սահմանում է, որ անձի նկատմամբ կիրառված
սանկցիան պետք է համաչափ լինի նրա վարքագծի բնույթին և հետևանքներին
(Նախագծի 141 հոդվածի 4-րդ մաս):

Նախագիծը սպառնիչ թվարկում է դատավարական սանկցիաների տեսակները:
Դրանք են՝

1. նախազգուշացումը,
2. իրավունքների իրականացման սահմանափակումը,
3. դատական նիստի դադարից հեռացնելը,
4. կարճաժամկետ ձերբակալումը,
5. դատարան հարկադրաբար ներկայացնելը,
6. դատական տուգանքը,
7. վարույթից հեռացնելը:

Դատավարական սանկցիայի յուրաքանչյուր տեսակի համար Նախագիծը նա-
խատեսել է իրավաչափության հստակ պայմաններ, կիրառության հիմքեր, ինչպես
նաև պարզորոշ ուրվագծել է այն սահմանափակումները, որոնց կարող է հանգեցնել
սանկցիաների կիրառումը: Միաժամանակ հստակ ամրագրվում է, որ դատավարա-
կան սանկցիայի կիրառումն արգելք չէ անձին օրենքով նախատեսված այլ պատաս-
խանատվության (կարգապահական, քրեական և այլն) ենթարկելու համար (Նա-
խագծի 141 հոդվածի 5-րդ մաս): Այս հարցի առնչությամբ հետաքրքիր կարգավո-
րում է առկա Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքում, որտեղ սահ-
մանվում է, որ եթե դատական նիստին մասնակցող անձանց վարքագծի մեջ առկա
են հանցագործության տարրեր, ապա դատախազը այդ անձի նկատմամբ պետք է
վարույթ նախաձեռնի, կամ դատարանը պետք է քրեական գործ հարուցելու հաղոր-
դում ուղարկի ոստիկանություն: Անհրաժեշտության դեպքում դատարանը դատա-
կան նիստի արձանագրության հիման վրա կարող է կալանավորել այդ անձին (Էս-
տոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 267 հոդվածի, 6-րդ մաս):

Նախազգուշացում տեսակի դատավարական սանկցիան նախատեսված է նաև
քրեական դատավարության գործող օրենսգրքով: Մասնավորապես, օրենսգրքի
314¹-րդ հոդվածով սահմանվում է, որ դատարանն իրավունք ունի կիրառել սանկ-
ցիայի այս տեսակը քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատա-
կան նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ: Ի տարբերություն գործող
կարգավորման՝ Նախագիծը շատ ավելի հստակ է բնորոշում սանկցիան. այն որո-

¹ Այս առումով ավելի լայն ձևակերպում է առկա Լատվիայի քրեական դատավարության օ-
րենսգրքում: Մասնավորապես, օրենսգրքի 289-րդ հոդվածը սահմանում է, որ դատավարա-
կան սանկցիաներ կիրառելու հիմքերն են՝ դատավարական պարտականության չկատարու-
մը, դատավարական գործողության ընթացքը խոչընդոտելը, պատշաճ ծանուցված լինելու
պայմաններում առանց հարգելի պատճառ ունենալու դատավարական գործողության կա-
տարմանը չներկայանալը, դատավարական պարտականությունների կատարումն անհարգե-
լի պատճառով հետաձգելը (Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքի 289 հոդ-
ված), թեև բոլոր այս գործողությունների կատարումն էլ վերջին հաշվով հանգեցնում է վա-
րույթի բնականոն ընթացքի խաթարմանը:

շակի վարության գործողություն կատարելու ժամանակ կամ դատական նիստի ընթացքում վարույթի մասնակցին կամ այլ անձին ուղղված պատշաճ վարքագիծ դրսևորելու կամ իրավասու անձի կարգադրություններին ենթարկվելու հրահանգ է (Նախագծի 142 հոդվածի 1-ին մաս): Այսինքն՝ եթե գործող տարբերակում նախագգուշացումը կիրառվում է միայն դատարանի կողմից դատական նիստի կարգն ապահովելու նպատակով և կիրառվում է բանավոր ընթացակարգով, ապա Նախագծի կարգավորումների պարագայում նախագգուշացում կարող է կիրառվել նաև մինչդատական վարույթում՝ գրավոր ընթացակարգով, իսկ դատական վարույթում՝ բանավոր՝ այն մտցնելով դատական նիստի արձանագրության մեջ: Նախագգուշացման պահանջները չկատարելը կարող է առաջ բերել Նախագծով նախատեսված այլ սանկցիայի կիրառում, ինչի մասին վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում պատշաճ ձևով հայտնում է համապատասխան անձին:

Ուշագրավ է նաև, որ Լատվիայի քրեադատավարական կարգավորումների համաձայն՝ գործին մասնակցող փաստաբանի կամ դատախազի նկատմամբ կարող է կիրառվել միայն նախագգուշացում (Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մաս):

Նախագծի նորամուծություններից մեկն *իրավունքների իրականացման սահմանափակում* տեսակի սանկցիայի նախատեսում է: Առաջին հայացքից այն կարծես հակասական է թվում, քանի որ մի կողմից Նախագիծը վարույթի մասնավոր մասնակցին օժտում է այս կամ այն իրավունքով (օրինակ՝ միջնորդություններ հարուցել, բացարկներ հայտնել, ապացույցներ ներկայացնել և այլն), իսկ մյուս կողմից՝ սահմանափակում է դրանց իրականացման հնարավորությունը: Սակայն դրա բովանդակության ավելի խորը վերլուծությունը ցույց է տալիս, որ այս սանկցիան վարույթի ընթացքում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության իրական երաշխիք է:

Այսպես, իրավունքների իրականացման սահմանափակում դատավարական սանկցիան կարող է կիրառվել վարույթի մասնակցի կամ վկայի նկատմամբ որոշակի իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում (օրինակ՝ մեղադրյալի կողմից վարույթի նյութերին ոչ ողջամիտ տևողությամբ ծանոթանալը կամ վկայի կողմից մեկ տասնյակից ավելի փաստաբաններով հարցաքննության ներկայանալը): Այն դրսևորվում է համապատասխան որոշումով դրանց իրականացման համար ժամանակային կամ քանակական պայմանների սահմանափակմամբ: Ընդ որում՝ այս սանկցիան կարող է կիրառվել միայն սպառիչ թվարկված և սահմանափակ շրջանակով իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում: Դրանք են՝ միջնորդություն հարուցելը, բացարկ հայտնելը, վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ապացույց ներկայացնելը, վարույթի նյութերին ծանոթանալը և դրանցից ցանկացած տեղեկություն դուրս գրելը, բացման խոսքով, եզրափակիչ ելույթով կամ եզրափակիչ հայտարարությամբ հանդես գալը, պաշտպանից իրաժարվելը (Նախագծի 143 հոդվածի 1-2-րդ մասեր):

Միաժամանակ սանկցիայի կիրառման իրավաչափությունն ապահովելու համար նախատեսված են մի շարք երաշխիքներ: Մասնավորապես անհրաժեշտ է, որ կոնկրետ անձի կողմից համապատասխան իրավունքը չարաշահվի պարբերաբար, ինչը ենթադրում է չարամտության կամ դիտավորության դրսևորման բազմակիություն: Բացի այդ, այս սանկցիան կարող է կիրառվել բացառապես որոշմամբ, ինչն ապահովում է դրա բողոքարկման հնարավորությունը: Ի վերջո, Նախագիծը հստակ սահմանում է, որ դատավարական այս սանկցիայի կիրառումը չպետք է բացառի

համապատասխան իրավունքի բուն իրացումը (Նախագածի 143 հոդվածի 4-րդ մաս):

Հաջորդ կարևոր հայեցակետը նորմում տեղ գտած «չարաշահում» եզրույթն է, որն ինքնին գնահատողական կատեգորիա է, և նորմատիվ ակտերով նախատեսված չեն այն բնութագրող ձևական հատկանիշները, ինչպես նաև՝ այն դեպքերը, որոնցում այս կամ այն գործողությունը կարելի է գնահատել որպես չարաշահում: Հայերենում «չարաշահել» նշանակում է ի չար գործադրել, չարարկել, չարամտել, ինչն իր հերթին բացատրվում է որպես չար դիտավորություն, չար մտադրություն, որն ուղղված է որոշակի նպատակի¹: Այսինքն, քրեաիրավական տեսանկյունից միանշանակ կարելի է փաստել, որ չարաշահել եզրույթը պարունակում է ոչ միայն դիտավորություն, այլև որոշակի ուղղվածություն, հստակ նպատակ, ընդ որում՝ ինչ-որ արդյունքի հասնելու համար: Ստացվում է, որ իրավունքի չարաշահման դեպքում վարույթին ներգրավված անձը դիտավորությամբ միտում ունի իր գործողություններով հասնել ինչ-որ նպատակի, ինչն իր կամ այլ անձի համար կարող է ունենալ որոշակի դրական հետևանքներ:

Նախագծով նախատեսված հաջորդ սանկցիան *դատական նիստի դահլիճից հեռացնելն է*: Այն դասվում է միայն դատական վարույթի ընթացքում կիրառվող սանկցիաների թվին և նպատակ է հետապնդում ապահովել դատական նիստի կարգն ու բնականոն ընթացքը: Քրեական դատավարության գործող օրենսգրքում առկա նույնանուն սանկցիան նախատեսում է, որ այն կարող է կիրառվել քրեական դատավարությանը մասնակցող անձանց, ինչպես նաև դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ: Ընդ որում՝ առաջինների դեպքում այն կարող է կիրառվել ոչ ավել, քան 36 ժամով, իսկ երկրորդների պարագայում՝ որոշակի ժամկետով կամ մինչև դատաքննության ավարտը:

Նախագծի կարգավորումներով ևս դատավարական այս սանկցիան կարող է կիրառվել ինչպես վարույթի մասնավոր և հանրային մասնակիցների, այնպես էլ դատական նիստի դահլիճում ներկա այլ անձանց նկատմամբ: Այս տեսանկյունից գործող կարգավորումների համեմատ Նախագիծը մեկ քայլ առաջ է գնացել և որպես լրացուցիչ երաշխիք սահմանել, որ եթե դատական նիստի դահլիճից հեռացված անձի բացակայությամբ (դատախազ, պաշտպան, տուժող) դատական նիստը շարունակելն անհնար է, ապա դատարանը ողջամիտ ժամկետով հետաձգում է վարույթը (Նախագծի 144 հոդվածի 3-րդ մաս)²:

Ավելին, Նախագծում նաև հստակ սահմանվել է, որ այս սանկցիայի կիրառման

¹ Աղայան Է., Արդի հայերեն բացատրական բառարան, Երևան, 1976, էջեր 1156, 1157:

² Նախագծի այդ կարգավորումը կարևորվում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի ձևակերպած իրավական դիրքորոշումն տեսանկյունից: Այսպես, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1191 որոշման մեջ նշել է, որ ինչպես դատախազը (գործով պետական մեղադրողը), այնպես էլ պաշտպանը (փաստաբանը, կողմի ներկայացուցիչը) կատարում են դատարանում մեղադրանքը պաշտպանելու և անձանց իրավաբանական օգնություն տրամադրելու սահմանադրաիրավական գործառնություններ, որոնք միտված են ինչպես անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովման, այնպես էլ վերջինիս հետ շաղկապված անկախ, արդար, անկողմնակալ, մրցակցային արդարադատության իրականացմանը՝ Սահմանադրությամբ հաստատագրված նպատակների իրագործմանը: Հետևաբար, դատավարության մասնակից վերոհիշյալ սուբյեկտների իրավական (դատավարական) կարգավիճակի առանձնահատկությունը, համաձայն որի՝ նրանք ենթակա չեն դատարանի կողմից անմիջականորեն կիրառման ենթակա որոշ սանկցիաների (նիստերի դահլիճից հեռացում, դատական տուգանք), ուղղակիորեն պայմանավորված է քրեադատավարական հարաբերություններում օրենքով նրանց վերապահված իրավունքների ու պարտականությունների բնույթով:

անհրաժեշտ պայման է արդեն իսկ մեկ անգամ կիրառված նախազգուշացման պահանջները չկատարելը: Սանկցիան կիրառվում է բանավոր՝ կարգադրությունը ներառելով դատական նիստի արձանագրության մեջ:

Այդուհանդերձ, Նախագծում կարգավորված չէ այն հարցը, թե արդյոք դատական նիստի դահլիճից կարելի է հեռացնել այդ պահին ցուցմունք տվող անձին (օրինակ՝ վկային կամ տուժողին), և եթե այո, ապա ինչպե՞ս է երաշխավորվելու նրանց ցուցմունք տալու պարտականության ապահովումը: Չէ՞ որ գործնականում քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ դատական նիստի կարգը չեն պահպանում հենց հարցաքննվող անձինք:

Կարծում ենք, որ Նախագծով պետք է հստակ երաշխիքներ նախատեսվեն վկայի (տուժողի, փորձագետի) ցուցմունք տալու և մեղադրյալի հակընդեմ հարցման իրավունքի իրացումն ապահովելու տեսանկյունից: Այլ կերպ ասած՝ սանկցիայի նշված տեսակի կիրառումը չպետք է վկային ազատի իր պարտականությունները կատարելուց: Հակառակ դեպքում Կոնվենցիայի և ՄԻԵԴ տեսանկյունից նման վկան չի համարվի հարգելի պատճառներով բացակայող, ինչն իր հերթին կհանգեցնի 6-րդ հոդվածի խախտմանը: Վկայի բացակայության հայեցակարգը ՄԻԵԴ-ը կապում է միայն երկու չափանիշների հետ. նախ, որ բացակայող վկայի չներկայանալու պատճառը պետք է լինի խիստ հարգելի և պատշաճ պատճառաբանված, և հետո՝ դատական քննությանը բացակայող վկայի ցուցմունքը չպետք է լինի միակը և վճռորոշը:

Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում վերահաստատել է այն դիրքորոշումը, որ մինչև մեղադրյալի դատապարտումը բոլոր ապացույցները պետք է դիտարկվեն նրա ներկայությամբ հրապարակային դատաքննության ընթացքում՝ հաշվի առնելով մրցակցության սկզբունքը: Սկզբունքից շեղումներ հնարավոր են, սակայն դրանով չպետք է խախտվի պաշտպանության իրավունքը, որը, որպես կանոն, ի թիվս այլնի պահանջում է, որ մեղադրյալը հնարավորություն ունենա հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին¹:

Նախագիծն իրավացիորեն առանձին կարգավորման է ենթարկել դատական նիստի դահլիճից մեղադրյալին հեռացնելու դեպքերը: Մասնավորապես, մեղադրյալին դատական նիստի դահլիճից առաջին և երկրորդ անգամ հեռացնելու դեպքում վարույթը հետաձգվում է: Մեղադրյալին դատական նիստի դահլիճից հեռացնելու՝ օրենքով նախատեսված հիմքի հետագա առկայության դեպքում դատարանը մեղադրյալին հեռացնում է դատական նիստի դահլիճից՝ շարունակելով տվյալ դատական նիստը: Սակայն, պաշտպանության իրավունքի ապահովման նկատառումներից ելնելով, վերդիկտ և դատավճիռ հրապարակելիս անազատության մեջ պահվող մեղադրյալի մասնակցությունը դատական նիստին ամեն դեպքում պարտադիր է (Նախագծի 144 հոդվածի 4-րդ մաս):

Մեղադրյալի պաշտպանության իրավունքի լիարժեք իրացման տեսանկյունից կարևորվում է նաև Նախագծի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետը, ըստ որի՝ պաշտպանի մասնակցությունը վարույթին պարտադիր է, երբ մեղադրյալը հեռացվել է դատական նիստի դահլիճից: Այս կարգավորման պայմաններում մեղադրյալը

¹ Տե՛ս՝ Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը (գանգատ թիվ 8088/05), կետեր 75-78: http://www.justice.am/storage/files/legal_acts/legal_acts_6542236108971_GABRIELIAN_HYE_.pdf

չի գրկվում իր պաշտպանության, այդ թվում՝ իր դեմ ցուցմունք տված անձանց հարցաքննելու և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված մյուս իրավունքների լիարժեք իրացումից:

Դատական նիստի դահլիճից հեռացված ամբաստանյալի պաշտպան ունենալու իրավունքը ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 314¹-րդ հոդվածի շրջանակներում քննարկման առարկա է դարձրել ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0225/01/11 գործով որոշման մեջ: Սասնավորապես, որոշման 27-րդ կետում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալի իր վերաբերյալ իրականացվող դատական քննությանը մասնակցելու իրավունքը չի նշանակում, որ այն պետք է երաշխավորված լինի վերջինիս կողմից դատական նիստի կարգը խախտելու, նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու, ինչպես նաև դատավարության մասնակիցների՝ քրեադատավարական օրենքով երաշխավորված իրավունքների իրացման համար խոչընդոտներ ստեղծելու պայմաններում: Ուստի ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելը հետապնդում է իրավաչափ նպատակ, և այդ կապակցությամբ շահագրգիռ անձի՝ արդար դատական քննությունն ապահովող իրավական արժեքների սահմանափակումը նույնպես իրավաչափ է: Վճռաբեկ դատարանը միևնույն ժամանակ գտնում է, որ դատական սանկցիաներ կիրառելու դատարանի հնարավորությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի ունենալ, որ դրանք չեն կարող հանգեցնել արդար դատական քննության իրավունքի չեզոքացմանը: Այս կապակցությամբ հանրային և մասնավոր իրավաչափի շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ շահագրգիռ անձը չգրկվի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից: Այս առումով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու և նրան դատական նիստերի դահլիճից հեռացնելու դեպքում վերջինիս պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման, ինչպես նաև մրցակցային դատավարության սկզբունքի կենսագործման առումով առաջնային նշանակություն է ստանում դատական քննությանը պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովելու հարցը քննարկելու դատարանի պարտականությունը: Ընդ որում, քրեական դատավարությանը պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը կանոնակարգող համապատասխան քրեադատավարական դրույթներն ուղղակիորեն պարտավորեցնում են քրեական վարույթն իրականացնող մարմնին ապահովել պաշտպանի պարտադիր մասնակցությունն ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելու դեպքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդված):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314¹ -րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դատական սանկցիան ամբաստանյալի նկատմամբ կիրառելու և նրան դատական նիստերի դահլիճից հեռացնելու դեպքում տվյալ դատական քննությունը կարող է շարունակվել բացառապես պաշտպանի պարտադիր մասնակցության հարցը քննարկելու պայմաններում: Հակառակ դեպքում կխախտվեն ամբաստանյալի պաշտպանության իրավունքը և մրցակցության սկզբունքը, ինչն էլ կհանգեցնի արդար դատական քննության հիմնարար իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներն այս առումով այդքան էլ համապարփակ չեն:

Մասնավորապես, եթե դատական նիստի դահլիճից հեռացվում է պաշտպան չունեցող մեղադրյալը, ապա նրան պետք է հնարավորություն տրվի մասնակցել դատական վիճաբանություններին: Ամեն դեպքում մեղադրյալը պետք է ունենա վերջին խոսքի իրավունք (Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքի 297 հոդվածի 2-րդ մաս):

Թե՛ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը, թե՛ Նախագիծը սանկցիայի այս տեսակը դասում են անմիջականորեն կատարման ենթակա սանկցիաների թվին՝ առանց բողոքարկման հնարավորություն նախատեսելու: 2015 թվականին դատական նիստի դահլիճից հեռացնելու բողոքարկման հնարավորության հարցը դարձել է սահմանադրական վերանայման առարկա: Այս առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1119 որոշման մեջ արձանագրել է, որ միջանկյալ դատական այսպիսի ակտերի բողոքարկելիության իրավական սահմանափակ հնարավորությունը պայմանավորված է դատաքննության բնականոն ընթացքը խոչընդոտող ոչ իրավաչափ ու անկանխատեսելի հանգամանքների արագ վերացման և արդար, արդյունավետ, անկողմնակալ, բազմակողմանի ու օբյեկտիվ դատաքննություն իրականացնելու համար օրենքով նախատեսված պայմաններ ստեղծելու (ապահովելու) անհրաժեշտությամբ, որը նաև երաշխիք է անձի իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ իրացնելու համար: Հետևաբար սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ, և նման մեկնաբանման ու դրան համապատասխան կիրառման դեպքում սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել:

Նախագիծը սահմանում է ևս երկու դատավարական սանկցիա՝ *կարճաժամկետ ձերբակալում և դատարան հարկադրաբար ներկայացնելը*, որոնք մասամբ նորանուծություն են հայրենական քրեական դատավարությունում: Թերևս նպատակարմար է այս երկու սանկցիաները քննարկել համակցության մեջ:

Այսպես, կարճաժամկետ ձերբակալումը կարող է կիրառվել միայն մինչդատական վարույթում՝ քննիչի համապատասխան որոշմամբ: Դատավարական այս սանկցիայի կիրառման հիմքը վարույթի մասնավոր մասնակցի (բացառությամբ պաշտպանի և լիազոր ներկայացուցչի), ինչպես նաև վկայի, փորձագետի կամ թարգմանչի կողմից քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելն է (Նախագծի 145 հոդվածի 1-ին մաս): Անձին ձերբակալելուց առաջ համապատասխան հանձնարարություն ստացած հետաքննիչը ստորագրությամբ վերջինիս է հանձնում ձերբակալման որոշման պատճենը: Ազատությունից փաստացի զրկվելուց հետո անձն անմիջապես տարվում է քննիչի մոտ, ով այդ փաստն ամրագրում է անձի ձերբակալման արձանագրության մեջ, որի պատճենը հանձնում է ձերբակալվածին: Ընդ որում՝ կարճաժամկետ ձերբակալումը չի կարող տևել ավելին, քան այն պարտականության կատարումը, որի ապահովման նպատակով ձերբակալվել է անձը, սակայն բոլոր դեպքերում ոչ ավելի, քան տասներկու ժամը: Անձին անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը վերանալու կամ տասներկու ժամը լրանալու դեպքում անձն հապաղ ազատ է արձակվում:

Ինչ վերաբերում է դատարան հարկադրաբար ներկայացնելուն, ապա սրա տարբերությունը կարճաժամկետ ձերբակալումից այն է, որ այն կիրառող մարմինը դատարանն է, իսկ սանկցիան կիրառվում է դատական վարույթի ընթացքում: Սուբյեկտային կազմը նույնն է, նույնն են նաև կիրառման հիմքերը: Դատարան ներկա-

յացված անձը չի կարող անազատության մեջ պահվել ավելին, քան այն պարտականության կատարումը, որի ապահովման նպատակով անձը ներկայացվել է դատարան: Համապատասխան պարտականությունը կատարելուց հետո անձն անհապաղ ազատ է արձակվում, ինչի մասին նշվում է դատական նիստի արձանագրության մեջ, որից համապատասխան մասով քաղվածքը նույն օրը տրամադրվում է տվյալ անձին (Նախագծի 146 հոդվածի 4-րդ մաս)¹:

Ինչպես և գործող օրենսգիրքը, Նախագիծը ևս քրեական վարույթի ընթացքում կիրառման ենթակա սանկցիաների մեջ ներառել է *դատական տուգանքը*: Այն դեպքում, երբ դատական վարույթի մասնակիցը (բացառությամբ պաշտպանի, լիազոր ներկայացուցչի և հանրային մեղադրողի) չի կատարում նախագահողի տված նախազուլացման պահանջները, դատարանն իրավասու է նրա նկատմամբ նշանակել դատական տուգանք (Նախագծի 147 հոդվածի 1-ին մաս): Դատական տուգանքի չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը: Դատական տուգանքը կիրառվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ, որի պատճենը նույն օրն ուղարկվում է տուգանված անձին: Դատական տուգանք նշանակելու մասին որոշումը կարող է բողոքարկվել հատուկ վերանայման կարգով:

Նախագծով նախատեսված դատավարական ամենախիստ սանկցիան *վարույթից հեռացնելն է* (Նախագծի 148 հոդված): Այս սանկցիան կարող է կիրառվել սահմանափակ թվով սուբյեկտների նկատմամբ՝ փաստաբան, օրինական ներկայացուցիչ, ինչպես նաև հանրային մեղադրող: Այն կիրառելի է ինչպես մինչդատական, այնպես էլ դատական վարույթներում: Այսպես, վարույթին մասնակցող փաստաբանը, օրինական ներկայացուցիչը, ինչպես նաև հանրային մեղադրողը վարույթն իրականացնող մարմնի հիմնավոր որոշմամբ կարող են վարույթից հեռացվել հետևյալ դեպքերում.

1. երկու անգամ առանց հարգելի պատճառի չեն ներկայացել դատական նիստին կամ իրենց համար պարտադիր վարութային գործողության կատարմանը,

2. երեք անգամ դատավարական սանկցիայի ենթարկվելուց հետո շարունակում են չարամտորեն չկատարել իրենց պարտականությունները:

Մինչդատական վարույթում փաստաբանին կամ օրինական ներկայացուցչին վարույթից հեռացնելու մասին քննիչի որոշումը ենթակա է հաստատման հսկող դատախազի կողմից: Այդ որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին, իսկ նրա կողմից բողոքը չբավարարելու դեպքում՝ դատարան: Ինչ վերաբերում է անձին վարույթից հեռացնելու մասին դատարանի որոշմանը, ապա այն ենթակա է բողոքարկման հատուկ վերանայման կարգով:

¹ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը քրեական վարույթի առանձին մասնակիցների վրա դրված դատավարական պարտականությունների կատարումն ապահովում է դատավարական հարկադրանքի տեսակ հանդիսացող՝ բերման ենթարկելու միջոցով: Ըստ օրենսգրքի 153-րդ հոդվածի՝ բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է՝ նրա նկատմամբ համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ: Բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա: Բերման ենթարկելու մասին որոշումը կատարում է հետաքննության մարմինը:

Դատական քննության փուլում դատարանի որոշմամբ վարույթից կարող է հեռացվել նաև հանրային մեղադրողը: Սակայն, հաշվի առնելով, որ հանրային մեղադրողի մասնակցությունը պարտադիր է դատական նիստին, Նախագծի 280 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վարույթից հանրային մեղադրողին հեռացնելու կամ այլ պատճառով դատախազի հետագա մասնակցության անհնարինության դեպքում նա փոխարինվում է այլ դատախազով: Վարույթին ընդգրկված նոր դատախազին դատարանը տրամադրում է քրեական գործն ուսումնասիրելու և մեղադրանքի պաշտպանությանը նախապատրաստվելու համար ողջամիտ ժամկետ՝ հաշվի առնելով վարույթի բարդությունը, դատական վարույթի վրա արդեն ծախսված ժամանակը, ինչպես նաև այլ հանգամանքներ:

Նույն հոդվածի 4 և 5-րդ մասերը նմանատիպ երաշխիքներ են սահմանում դատական քննության փուլում վարույթից հեռացված պաշտպանի համար¹:

Ամփոփելով դատավարական սանկցիաների վերաբերյալ Նախագծով առաջարկվող կարգավորումները՝ պետք է նշել, որ դրանցով փորձ է արվել համակարգային լուծում տալ տարիների ընթացքում քրեական արդարադատության առջև ծառայած մի շարք խնդիրների, որոնք բացասաբար են անդրադառնում ողջ վարույթի բնականուն ընթացքի և արդյունավետության վրա: Ուստի մոտ ապագայում ոչ իրավաչափ վարքագծի արգելքի սկզբունքի և դրա իրացումն ապահովող կառուցակարգերի կիրառումը նախ և առաջ միտված է լինելու քրեական վարույթի գլխավոր նպատակներից մեկի՝ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության ապահովմանը:

¹ Համանման կարգավորումներ է նախատեսում նաև Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքը: Սասնավորապես, փաստաբանը, ներկայացուցիչը կամ դատախազը վարույթից կարող է հեռացվել, երբ՝ 1) չի հետևում նախագահողի կարգադրություններին, 2) դատական նիստի ընթացքում դրսևորում է անազնիվ, անպատասխանատու վարքագիծ, 3) անբարեխղճորեն խոչընդոտում է արդարադատության իրականացմանը, ձգձգում է քննության ողջամիտ ժամկետները, 4) պարբերաբար հրաժարվում է ենթարկվել դատարանի կարգադրություններին: Դատավարական այս սանկցիայի կիրառմամբ դատարանն անմիջապես դատավարության կողմին առաջարկում է ընտրել նոր պաշտպան կամ ներկայացուցիչ, իսկ գլխավոր դատախազությանը՝ դատարանի կողմից սահմանված ժամկետներում նշանակել նոր դատախազ (Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 267 հոդվածի 4, 4.1, 4.2 մասեր):

ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ ПРОЦЕССУАЛЬНЫХ САНКЦИЙ ПО ПРОЕКТУ УПК РА

Грайр Гукасян

*Помощник Президента РА по правовым вопросам,
Руководитель рабочей группы по разработке проекта нового УПК РА,
доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,
кандидат юридических наук*

Анаит Арутюнян

Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

Основной гарантией эффективности уголовного производства является обеспечение его естественного хода. С точки зрения его полноценного осуществления важное значение имеет должное поведение как публичных и частных его участников, так и лиц, оказывающих содействие уголовному производству. В этой связи существующие в действующем УПК регулирования имеют половинчатый характер и не в состоянии решать системные задачи уголовного процесса.

В отличие от действующего УПК, в проекте УПК РА эти правоотношения нашли свое целостное и эффективное урегулирование. Во-первых, закрепленный в Проекте принцип запрета на неправомерное поведение выражает возможность сбалансированной защиты публичных и частных интересов. Более того, в Проекте злоупотребление правом закреплено не только в качестве запрета на возможное поведение, но и предусмотрен действенный механизм реагирования на такое поведение в виде возможности применения соответствующих санкций. Так, в части, касающейся средств процессуального принуждения, предусмотрена отдельная глава “Процессуальные санкции”, в которой исчерпывающе изложены виды санкций, которые могут быть применены органом, осуществляющим уголовное производство. Помимо этого, согласно проекту УПК, применение процессуальных санкций распространяется и на досудебное производство, поскольку данным полномочием обладает как суд, так и следователь и прокурор. Кроме того, процессуальные санкции могут применяться исключительно в том случае, когда участник производства посредством злоупотребления правами или злостным уклонением от выполнения обязанностей создает препятствия для естественного хода уголовного производства, а также проявляет неуважительное отношение к суду. То есть, цель применения процессуальной санкции заключается в обеспечении надлежащего поведения лица, вовлеченного в уголовное производство. Именно по этой причине Проект четко устанавливает, что санкция в отношении лица должна быть пропорциональна характеру и последствиям его поведения.

FEATURES OF APPLYING PROCEDURAL SANCTIONS IN THE DRAFT CRIMINAL PROCEDURE CODE OF THE RA

Hrayr Ghukasyan

*Assistant of the President of the RA on Legal Issues,
Head of the Working Group on the Draft Code of Criminal Procedure of the RA,
Docent of the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics, Candidate of Laws*

Anahit Harutyunyan

PhD student of the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics

The main guarantee of effectiveness of a criminal proceeding is ensuring its normal course. In this regard, the demonstration of proper behavior by public and private participants of the proceedings as well as by supporting persons is of significant importance. In this context, the solutions in the current Criminal Procedure Code are fragmentary, not comprehensive. Therefore, they do not claim to solve the systemic problems faced by the criminal procedure.

Unlike the material legislation, the Draft Criminal Procedure Code provided these legal relations with a fundamental and comprehensive regulation. First of all, the principle of prohibition of unlawful behavior itself stipulated in the Draft illustrates the possibility of balanced protection of public and private interests. Moreover, the procedural sanctions articulated in the Draft enable to combat the possible abuses of the rights by any of the participants of the proceedings.

Բանալի բառեր – վարույթի բնականոն ընթացք, դատավարական սանկցիա, նախազգուշացում, իրավունքների իրականացման սահմանափակում, դատական նիստի դադարեցում, կարճաժամկետ ձերբակալում, դատարան հարկադրարար ներկայացնել, դատական տուգանք, վարույթից հեռացնել

Ключевые слова – естественный ход производства, процессуальная санкция, предупреждение, ограничение прав, удаление из зала судебных заседаний, краткосрочное задержание, принудительный привод в суд, судебный штраф, исключение из производства

Keywords – due course of the proceedings, procedural sanction, warning, limiting the exercise of the right, removal from the courtroom, short-term arrest, coercive presentation before the court, judicial fine, removal from the proceedings